

մեր թափած ջանքերը ու որքան կրաղձան կարո՞ւի, Արդահանի կցումը երրորդային Հայաստանի:

Հեղինակը հատորին վերջավորությանը կցած է ցանկը Հայաստանի բանաստեղծներին, վիպասաններին, բանասերներին, գիտնականներին, գրագիրներին, դերասաններին, շատերուն, ինչպես և ծաղկեփուռը մը Հայաստանի քերթողներին, քաղված իրենց գրական գործերին:

Ա. ՊԱՏՄԱԳՐՅԱԼ ՊԱՆԵՍՏԻՆԻ ՍԵՋ

Երաժշտագետ-երգահան Ա. Պատմագրյան գեղեցիկ մտածումը տանեցած էր ընդառաջ երթալու արտահայտված փափագին—Թեհրան վերադառնալիս առաջ կրկին այցելել Պահեստին և տալ համերգ-դասախոսություններու շարք մը:

Տարի մը առաջ էր, որ տեր և տիկին Պատմագրյանները Երուսաղեմ այցելեցին և Հայաստանի մանկատուններուն քի նպաստ մեծ համերգ մը տվին, որը արտակարգ շնորհ փայլուն անցավ և արժանացավ նաև հրեա երաժշտագետներու փանդախառն զնահատության: Այդ համերգին գոյացած 400 պաղեստինյան ռուկի շափ գումարը, վերջերս թիթիթերու մեջ հաճույքով կարողացինք, որ դրված է Պաղեստինահայ ներգաղթի Կոմիտեի տրամադրության տակ:

Մեր մեծ արվեստագետներու ներկայությունը Երուսաղեմի հայ երիտասարդության կողմից անհաշիվ ընդունելության հանդիպեց: Արդեն իսկ իրենց ժամանումին քանի մը օր առաջ վերջ տրված թխասեղանի մը ընթացքին ներկա գտնվող 80-ի շափ Բերկսեռ երիտասարդությունը որոշում կայացուց նոր համերգ մը կազմակերպելու Ոգևորությունը ծայր տվավ և կարճ ժամանակվա ընթացքին համերգը պատրաստվեցավ, որը տեղի ունեցավ Ուսյեմսիե հանդիսասրահին մեջ հոկտ. 26-ին:

Մեր արվեստագետներու անվան հմայքը, ինչպես նաև անցյալ տարվան համերգին ձգած անջնջելի տպավորումը, քաջած բերած էին Երուսաղեմի գրեթե ամբողջ այս բազմությունը, որ գիտեի միշտ զնահատել ազգային արժեքները: Լեցուն և խանդավառ մրահի առջև էր, որ տեղի ունեցավ համերգը:

Հայտագրին ճոխությունը, պեսպիսությունը և րազմաթիվ հայաստանյան երգերու նորությունը ստեղծեցին այն խանդավառությունը, որ միմիայն Պատմագրյան համերգները չընան ստեղծել:

Հաջորդ օրը, հոկտ. 27-ին Ուսյեմսիե-ի

Սիոն եպիսկոպոս իր վերադարձին այցելած է նաև Թեհրան, Դամասկոս, Հալեպ, Պեյրուսի, Երուսաղեմ, Եգիպտոս: Խմբանկարներ առնված այս վարդերին ընթերցողը ավելի կմոտեցնեն արտասահմանի հայության:

Ավելորդ է ըսել թե որքան մեծ ծառայություն մը մատուցած է մեզ Սիոն եպիսկոպոս իր այս հատորով:

ԱՍՏՂԻԿ ՍՈՒՐՅԱԼՆ

Նախաձեռնությամբ իր սրահին մեջ միջազգային մեծ համերգ մը կազմակերպված էր, որին կմասնակցեին օտարազգի մեներգողներ և երգչախումբեր: Մեր հյուր արվեստագետներու ներկայությունին օգտվելով հայ գաղութի այ հրավիրվեցավ մասնակցելու այդ համերգին: Հաճույքով նկատեցինք այն անակնկալը, որ եղավ օտարներու համար այդքան բարձրորակ երգչուհու ներկայությունը, ինչպես նաև մարզված երգչախումբի երգեցողությունը: Հիշենք նաև այն, որ հայտագիրը կազմված էր Լեռնական դասականներ և մեր խումբը երգեց կտորներ Հենտելի, Բերլիոզի և Սեզար Ֆրանքի, խորապես տպավորելով ներկայները և մեծապես բարձրացնելով մեր ազգային վարկը հայտ օտարներու, որոնք բուն և անվերջանալի ծախերով վարձատրեցին թե երգչուհին և թե դեկավարն ու իր խումբը:

Նոյեմբերի 3-ին Նույն խումբը հատուկ օթուպուսներով մեկնեց Ցաֆֆա, որտեղ կազմակերպված էր մեծ համերգ մը քի նպաստ հայ բուժարանի: Համերգը կհովանավորեի տիկ. Մաթևի, կառավարչին տիկինը: Սինեմա նապիլի տներ ձրիաբար տրամադրած էր իր սինեման, որը Ցաֆֆայի ամենանոր և շքեղ սրահն է:

Հայ գաղութը գրեթե ամբողջությամբ ներկա էր: Արդեն անցյալ տարվան համերգին գտած հաջողությունը մեծապես դուրացուցած էր կազմակերպչներուն գործը և քանի մը օրվան ընթացքին ամբողջությամբ տոմսերը սպառած էին արդեն: Մեծ թիվով օտար հրավիրյալներ կային, որոնց համար միանգամայն նորություն էր նմանօրինակ համերգ մը Ցաֆֆայի մեջ:

Գալով հայ գաղութին, այն խելահեղորեն խանդավառվեց հայտագրին առաջին իսկ համարին, երբ հսկա երգչախումբը, առաջին անգամ ըլլալով Ցաֆֆայի մեջ, խրոխտ և վեհորեն թնդացուց Սովետ Հայաստանի Պետական Հիմնը:

Ամենամեծ հաճույքով ներկաները նկատեցին, որ Պ. Պատմագրքյան իր հայտադիրը լեցուցած էր մեծ մասամբ հայաստանյան նոր կենցաղի, ուղղի և ժողովրդական երգերով, որ պատճառ դարձավ, որ սրահը թողար որոտընդոտ և խելահեղ ծափերու տարափիլի տակ Լամերզը ոչ միայն մեծապես հաջողեց նյութական հասույթի տեսակետի, ոչ միայն եղավ ազգային բրոքականդի հիանալի արտահայտություն մը, այլ մանավանդ հայաստանյան հոյակապ հանդես մը, որ հայրենադարձի այս խանդավառ օրերուն խորապես տպավորեց ներկաները:

Նույն օրը տեղ և տիկին Պատմագրքյանները ճաշի հրավիրած էին իրենց երգչախումբը Լալոց Վարժարանի սրահին մեջ: Ծաղկերուլի անցավ զվարթ և շնչոլ մթնոլորտի մը մեջ, ամենքը խանդավառված էին իրենց ունեցած հաջողության համար: Երկույան երգչախումբը միշտ ուրախ ու խանդավառ օթոպյուսներով վերադարձավ Երեսուղի:

Նոյեմբերի 3-ին տիկին Պատմագրքյան հրավիրված էր երգելու պետական ռատիոն: Հայտադիրը կազմված էր իր նախասիրած հին դասական հեղինակներն—Լյուդ, Լյուի, Հենտել և ալն: Ենթերիվ այն հանգամանքի, որ ժամը նշանակված էր անգլիական հալտադրի առին, հազարավոր ունկնդիրներ լրանեցին հայ տաղանդավոր երգչուհու այնքան համբավյալ ձայնը:

Քանի մը օր վերջ, նոյեմբերի 9-ին, Մարաշի Հայրենակցական Միության նախաձեռնությամբ իր ակումբի մեջ Ա. Պատմագրքյան տվավ դասախոսություն մը հայ երաժշտության անցյալի և ներկայի մասին: Հետաքրքրիղներու խումբ բազմություն մը լեցված էր սրահը: Պ. Պատմագրքյան ոչ մի-

այն մեծ վարպետ մըն է երգի, այլ նաև խոսքի: Այնչի քան մեկ ժամ տևող իր դասախոսության՝ ունկնդիրները պահեց էլիկ-տրեկականացած դրուկյամբ: Դասախոսության վերջավորության տիկին Պատմագրքյան օրինակներով համեմեց դասախոսությունը, մեծապես հաճույք պատճառելով ներկա բազմություն:

Ա. Պատմագրքյանի վերջին և փայլուն ելույթը տեղի ունեցավ նոյեմբերի 10-ին, ռատիոն տված իր համերգով: Պաղեստինի արաբական բաժնի վարչությունը ցանկություն հայտնեց հայ երգերի բաղկացած համերգ մը տալ, որի համար դիմեց մեր ղեկավարին: Պաղեստինի ռատիոկայանն ուրիշ անգամներ հայկական համերգներ տրվել են, բայց միշտ եվրոպական մասի կայանին: Այս առաջին անգամն էր, որ հայ արվեստը կենդանացվեա արաբական աշխարհին: Խոսնակը երկարորեն և հանգամանորեն ներկայացուց երգչուհին, ղեկավարը, երգչախումբը և երգվող կտորները բոլորը հայ երգեր:

Գրած ընդունելության լավագույն ապացույցն այն է, որ ռատիոյի վարչությունը արտոնություն խնդրեց Պ. Պատմագրքյանն համերգն ամբողջությամբ, երգվելու իսկ ժամանակ, սկսվառնկներու վերածել և երբեմն նվազել, օրպես հայկական հայտադիր:

Ահա համառոտ գծերով այն բեղուն գործունեությունը, որ մեր տաղանդավոր արվեստագետները ունեցան քանի մը շարժման կարճ բնակության ընթացքին մեր մեջ, մեծապես խանդավառելով հայրենաբարձ զանգվածները հայաստանյան և եվրոպական հանճարներու արվեստով:

ՔՂԹԱԿԻՑ

(«Եփրատ» քիվ, 2790 1946 թ.)

ՓՆԱՀԱՏԵԼԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանում ենք, որ Եկեղեցական Վարչության երկար տարիների անդամ երեցիոխ պ. Մատթեոս Թովմասյանի Թեմային թեմի Առաջնորդ Ռուբեն Եպիսկոպոս Դրամբանի տրամադրության տակ է դրել իր «Որբ» ամսագրի սինեմաթի ցուցադրման մեքենան, արժուները և ամբողջ ինվենտարը, որպեսզի սրբազան հայրը հատկացնե որևէ հասարակական հաստատության կարիքները հոգալու փութաբորժման:

Պ. Մատթեոս Թովմասյանը մեր հասարակության անձնավել ու անխոնջ գործիչներից է՝ զայն այդ նա միշտ էլ առատաձեռնորեն մեակեց և հանրային կարիքների հոգա-

ման: Սակայն իր այս նվիրատվությամբ պ. Թովմասյան գերազանցում է իր ամբողջ անցյալին և լավագույն ու զուլի օրինակ է ներկայացնում բոլոր նրանց, որոնք կարող են նման զոհողություններ անելով օգնել հայաբնակական հիմնարկների բարեկարգման:

Մենք մեծապես գնահատում ենք պ. Մ. Թովմասյանի այս սրտաբուխ և արժեքավոր նվիրատվությունը մաղթելով իրեն կատարյալ հաջողություն:

«ՎԵՐԱՄՈՒՆԻՄ»

(«Վերածնունդ» քիվ 246, 1946 թ.)

ՀԱՐԱՄԱՏԻ ԵԳԻՊՏԱԶԱՅՈՒ ՄԸ ՀՈՐԻՆԱԾ ՄԵՔԵՆԱԸ

Մեծ զարմանքով և հրճվածքով տեսանք տեղիդույս Հ. և Ն. Գալընյան եղբայրք աշխատանքին մեջ ինքնագործ շատ բարդ մեքենա մը, գործ Պ. Նուպար Գալընյանի: Այդ մեքենան շեռուցիչներու (բրիմուս օճախի) կառուցներ (ֆունիա) կապտառատե, կարծես մարդկային ուղեղն էր ղեկավարված և եվրոպականի հավասար ճշտությամբ ու կատարելությամբ: Այս մեքենան մեկ շարժումի ընթացքին ապշեցուցիչ արագությամբ 25 զանազան գործողություններ կիրացնե և ֆունիան դուրս կնետե հղկված, լվացված և մաքրված վիճակի մեջ. իսկ պղնձի փոշիները ուրիշ տեղ մը կկեղծունացնե ամենայն բժախնդրությամբ: Մեքենան կրնա արտադրել օրական 7000 ֆունիա:

Պ. Նուպար Գալընյան հինգ ամիս ճգնած է ջրհեղու համար այս մեքենան: Ան արգեն իսկ ձեռնարկած է շինությանը երեք նույնատիպ մեքենաներու, որոնցմե մեկը պիտի

ցուցադրվի մոտերս տեղի ունենալիք Եգիպտական Ճարտարարուեստական Ճուղահանդեսին, իրեն եգիպտական արտադրություն, իսկ հատ մըն ալ պիտի դրվի Սովետական Հայաստան իրեն նվեր:

Մեր այս հնարամիտ հայրենակիցը, որ համբավավ ճշտող մեքենագետ մըն է, հայտնեց նույնպես, թե մտադրած է հառաչիկաներգաղթին իր աշխատանքին մեքենական ամբողջ սարքավորումը Սովետական Հայաստան փոխադրել տրամադրելու համար մեր սիրեցյալ հայրենիքին վերելքի նվիրական գործին:

Կշորհավորենք մեր հայրենակիցը իր այս հաջողության, ինչպես նաև Մայր Հայրենիքի հանդեպ ունեցած սիրույն և խանդաղատանքին համար:

Գ. Ս. «Արև»

(«Նոր օր» թիվ 13, 1946 թ.)

ՄՈՐԻՍ ՍԱՐԳԻՍՈՅ ՄԵՈՒՄ

Զվիցելական թերթերը ցավով կգոժեն մահո՞ ժոնեի Գեղարվույթի Վարժարանի ուսուցիչների հայազգի Մորիս Սարգիսովի, որ կրողու բազմաթիվ արժեքավոր երկասիրություններ:

Հանգուցլալ զավակն էր համաթվավոր Մարգարիտոյ ժամացույցներու հնարիչ ողբացյալ Սարգիս Սարգիսովի:

(«Վերա» 2778, 1946 թ.)

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Թեհրանի Եվրաթնումդո-ը հետևյալ տեղեկությունները կհրատարակե. — Պ. Հովհաննես Միքայելյան և պ. Ալեքսի Դուպլայան, որոնք նախկին ուսանողներ են Կալկաթայի Հայոց Մարդասիրական ձեռնարանի, ներկայումս պատասխանատու պաշտոններ են վարում թե եկեղեցիում և թե վարժանների վարիչ մարմինների մեջ: Հայրենիքի բռնուն կարողություն ու հավատքով ամեն մարդ լծված է աշխատանքի: Այսօր հեռավոր Հնդկաստանի երկնակամարի տակ ապրում են որպես հայ ու հովիտ միացած են մեր արտասահմանի հարազատ եղբայրներին, ու խորունկ կարոտ ունին Մայր Հայրենիքի հանդեպ:

Այցելեցեք Հնդկաստանի այն կարևոր քաղաքները, ուր հայեր բնակություն են հաստատել, և անկասկած պիտի տեսնեք հայ եկեղեցիների երկնաշաղգ գմբեթները:

Հայ Մարդասիրական ձեռնարանը բաղկա-

ցած է տասը դասարաններից: Թեև նյութապես անկախ է, և կարող է տրեւ ժամանակ գործադրել զուտ ազգային ծրագիր, բայց որպեսզի հայ ուսանող դուրսություն ունենա Պետական Համալսարան մոտերու, կառավարության կրթական ծրագիրն է ընդունած: Դասախոսությունները մեծ մասամբ անգլերեն լեզվով են կատարվում: Բայց դասերից դուրս, ազատ ժամանակ, բոլոր ուսանողները խոսում են արևելահայ գրական մաքուր լեզուն:

Ձեռնարանի հայ ուսանողներն են, ուր գաղութին հայկական գույն ու փայլ են տալիս: Ազգային տոները ամեն տարի տոնում են մեծ շուքով: Հնդկահայ գաղութը անսահման անք է տառած ծաղկող Մայր Հայրենիքին հանդեպ:

(«Նոր օր» թիվ 31, 1946 թ.)

